

Վանաձորի քաղաքապետ

Մամիկոն Ասլանյանին

«Երկիր Օիրանի» կուսակցության ժողովի անդամ

Արամ Ենոքյանից

Հեռ՝ +374.98.87.10.16

+374.93.80.66.90

+374.55.40.39.00

Էլ. փոստ՝ yerkirtsiranipartyinfo@gmail.com

yerkirtsiraniparty@gmail.com

17.03.2018թ.

ԴԻՄՈՒՄ

ՀԱՆՐԱՅԻՆ ՀԱՎԱՔԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ

ԻՐԱԶԵԿՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ղեկավարվելով «Հավաքների ազատության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթներով՝ իրազեկում ենք լիազոր մարմնին, որ 2018 թվականի ապրիլի 9-ից մինչև ապրիլի 17-ը Վանաձոր քաղաքի Արցախ պուրակում Զարուհի Փոստանջյանը նախատեսում է անցկացնել հանրահավաք և Արցախ պուրակից երթ, որը նշված օրերին սկսվելու է ժամը 17:00-ին և ավարտվելու է մինչև 22:00-ն:

Հավաքի նպատակն է բողոք ընդդեմ բռնակալության և շուրջ 25-ամյա վաղեմության բռնությունների:

Կարգադրիչների մոտավոր թիվը 5-ն է, իսկ հավաքի մասնակիցների թիվը՝ շուրջ 1000: Երթի երթուղին է՝ Արցախի պուրակ-Տիգրան Մեծի փողոց-Թումանյան փողոց-

ՀՀ ԼՈՐՈՒ ՄԱՐԶ
ՎԱՆԱԶՈՐԻ ԶԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ
«20» 03 20 18թ
Մտից N 049 Գործ N 02

Գր. Լուսավորչի փողոց-Հայքի հրապարակ-Տիգրան Մեծի փողոց-Արցախի պուրակ:
Երթը սկսվելու է 19:00-ին և ավարտվելու է 22:00-ին:

Հավաքի և երթի անցկացման ժամանակ օգտագործվելիք առարկաները կամ տեխնիկական միջոցներն են՝ պաստառներ, բարձրախոսներ, դրոշակներ, թռուցիկներ:

Ղեկավարվելով «Հավաքների ազատության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթներով՝ խնդրում եմ պետության կողմից ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ հավաքի և երթի բնականոն ու խաղաղ ընթացքն ապահովելու նպատակով:

Կից ներկայացվում է՝

- Հավաքի կազմակերպչի անձնագրի պատճենը (Արամ Ենոքյան)
- Հավաքի ղեկավարի անձնագրի պատճենը (Զարուհի Փոստանջյան)

Դիմող՝ Արամ Ենոքյան

«Երկիր Ծիրանի» կուսակցության ժողովի անդամ